



## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն

«Նաիրի Ինջուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1996թ.-ին: Ընկերությունը տրամադրում է ոչ կյանքի ապահովագրությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում գտնվող գրասենյակում՝ Վ. Սարգսյան 10/110 հասցեում:

Ընկերության բաժնեմասերի 60%-ը պատկանում է Լևոն Քոչարյանին (ՀՀ, ք. Երևան, Ձորափի փողոց 72ա), 40%-ը՝ Վահագն Խաչատրյանին (ՀՀ, ք. Երևան, Մանթաշյան փողոց, շ 51, բն.38):

Ընկերության կորպորատիվ կառավարման գործընթացը ավարտվել է, ընկերությունում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքները: 31.12.2015թ -ի դրությամբ ընկերությունն ունի 4 անդամից բաղկացած խորհուրդ: Ընկերության կողմից հստակ տարանջատված են ընկերության խորհրդի, գործադիր մարմնի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Ընկերությունում ձևավորված է ներքին աուդիտի ստորաբաժանում:

Ընկերությունն ՀՀ տարածքում ունի 1 մասնաճյուղ: 31.12.2015թ դրությամբ ընկերությունն ունի 424 ապահովագրական գործակալ և 169 աշխատակից:

### Ծանոթագրություն 2. Պատրաստման հիմունքներ

#### Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

#### Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար՝ բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

#### Գործառնական և ներկայացման արժույթ

Կազմակերպության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

#### Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

## ***Վերադասակարգում և վերաներկայացում***

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

## ***Գործունեության անընդհատությունը***

Մույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

## **Ծանոթագրություն 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության**

### **Ապահովագրության պայմանագրեր**

Ապահովագրության Պայմանագիրը պայմանագիր է, ըստ որի՝ կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադիրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադիրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադիրի վրա:

Պայմանագիրը, որը բավարարում է ապահովագրության պայմանագրի սահմանմանը, մնում է որպես ապահովագրության պայմանագիր մինչ իր ժամկետի վերջը, նույնիսկ եթե ապահովագրության ռիսկը զգալիորեն կրճատվում է այդ ժամանակաշրջանի համար, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց գործողության ժամկետը լրանում է:

### ***Ճանաչում և չափում***

#### ***Համախառն ապահովագրավճարներ***

Համախառն ապահովագրավճարներն ընդգրկում են պայմանագրով նախատեսված ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր ստացվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Համախառն ապահովագրավճարները ընդգրկում են միջնորդներին վճարվելիք միջնորդավճարները, և չեն ներառում ապահովագրավճարների գծով հարկերը և այլ պարտադիր վճարները:

#### ***Չվաստակաժ ապահովագրավճարների պահուստ***

Չվաստակաժ ապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված ապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է, որպես չվաստակաժ ապահովագրավճարների պահուստ:

#### ***Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ***

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները ընդգրկում են պայմանագրով նախատեսված ծածկույթի ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր վճարվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Չվաստակաժ վերաապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված վերաապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերվում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է՝ որպես չվաստակաժ ապահովագրավճարների համախառն պահուստում վերաապահովագրողների մասի փոփոխություն:

#### ***Համախառն հատուցումներ***

Համախառն հատուցումները թաղկացած են ապահովադիրներին վճարված հատուցումներից, ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների գնահատականների փոփոխություններից, կարգավորման ներքին և արտաքին ծախսերից: Հատուցումները ճանաչվում են դրանց ներկայացման պահին:

#### ***Համախառն հատուցումներում վերաապահովագրողների մասը***

Հատուցումներում վերաապահովագրողների մասը ճանաչվում են այն ժամանակ, երբ դրանց գծով համախառն ապահովագրական հատուցումը ճանաչվում է համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն:

#### ***Վերաապահովագրության միջնորդավճարներից եկամուտ***

Մտացված կամ ստացվելիք վերաապահովագրության միջնորդավճարները, որոնք չեն պահանջում Ընկերությունից հավելյալ ծառայությունների մատուցում, Ընկերության կողմից ճանաչվում են որպես եկամուտ համապատասխան պոլիսների ուժի մեջ մտնելու կամ վերակնքման պահին: Այնուամենայնիվ, եթե հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի հետագա ծառայությունների մատուցում, ապա միջնորդավճարը, կամ դրա մի

մասը, հետաձգվում է և ճանաչվում որպես եկամուտ այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվում են ծառայությունները:

### ***Ձեռքբերման ծախսեր***

Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի համար, երբ դրանք տեղի են ունեցել: Ձեռքբերման ծախսերն ընդգրկում են ուղղակի ծախսեր, ինչպիսիք են օրինակ միջնորդավճարները և բժշկական վճարները: Ձեռքբերման ծախսերի մի մասը հետաձգվում է հետագա հաշվապահական ժամանակաշրջանների համար այդ հետագա ժամանակաշրջաններ հետաձգված ապահովագրավճարներին համապատասխանելու համար: Ձեռքբերման ծախսերի հետաձգումը հաշվարկվում է՝ յուրաքանչյուր պայմանագրի գծով ձեռքբերման ծախսի վրա կիրառելով չվաստակած ապահովագրավճարների և գրանցված ապահովագրավճարների հարաբերակցությունը:

### ***Ապահովագրական պարտավորություններ***

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները ճանաչվում են այն ժամանակ, երբ պայմանագրերը ուժի մեջ են մտնում: Այս պարտավորությունները հայտնի են որպես չկարգավորված պահանջների պահուստ, որը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած, բայց դեռևս չվճարված պահանջների գծով գնահատված վերջնական ծախսումների վրա, անկախ նրանից ներկայացված են, թե՛ ոչ, ինչպես նաև համապատասխան պահանջների գծով կարգավորման ծախսերի վրա, հանած ակնկալվող սուբրոգացիոն և այլ վերականգնումները: Որոշ պահանջների ծանուցման կամ կարգավորման առումով կարող են լինեն հետաձգումներ, հետևաբար այս պահանջների վերջնական արժեքը չի կարող հստակորեն որոշվել հաշվետու ամսաթվի դրությամբ: Պարտավորությունը հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով ստանդարտ ակտուարական պահանջների կանխատեսման մեթոդները, որոնք հիմնվում են էմպիրիկ տվյալների և ընթացիկ ենթադրությունների վրա, որոնք կարող են ներառել լաստակական շեղման մարժա: Պարտավորությունը չի գեղջվում փողի ժամանակային արժեքով: Պարտավորություններն ապահովվում են, երբ պայմանագրային պարտավորությունները կատարվում են կամ երբ այն դադարում է:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստը իրենից ներկայացնում է ապահովագրավճարների այն մասը, որը ակնկալվում է ստացվել հետագա ժամանակաշրջանների ընթացքում:

Մովորաբար պահուստը նվազեցվում է պայմանագրի ժամկետի ընթացքում և ճանաչվում է որպես վաստակած ապահովագրավճարի եկամուտ: Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին գնահատում է, թե արդյոք իր կողմից ճանաչված ապահովագրության պարտավորությունները համարժեք են՝ օգտագործելով իր ապահովագրության պայմանագրերի ներքո ապագա դրամական միջոցների հոսքերի ընթացիկ գնահատումները: Եթե այդ գնահատումը ցույց է տալիս, որ իր ապահովագրական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները) համարժեք չեն գնահատված՝ ապագա դրամական միջոցների հոսքերի հետ համեմատած, ապա ամբողջ պակասորդը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

### ***Ապահովագրության գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքեր***

Ապահովագրության գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքերը հաշվառումը նույնն է, ինչ ֆինանսական գործիքներինը:

### ***Վերաապահովագրություն***

Ընկերությունը ստանձնած ռիսկերի գծով վնասները ծածկելու նպատակով վերաապահովագրում է իր կողմից ապահովագրած ռիսկերը:

Վերաապահովագրական պայմանագրերից ծագող ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապատասխան ապահովագրության պայմանագրերից ծագած ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի դիմաց:

Վերաապահովագրական պայմանագրերով սահմանված գումարները հաշվառվում են ապահովագրական պայմանագրերի հաշվառման սկզբունքներին համապատասխան: Վերաապահովագրավճարի գծով ծախսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, երբ փոխանցվում է վերաապահովագրված ռիսկը: Փոխանցված վերաապահովագրավճարների չծախսագրված մասը ներառվում է վերաապահովագրական ակտիվներում:

Վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է այն դեպքում, երբ առկա է անկողմնակա վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ պայմանագրի պայմաններով իրեն հասանելի բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք:

Եթե վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է, ապա Ընկերությունը նվազեցնում է դրա հաշվեկշռային արժեքը և արժեզրկումից կորուստը ճանաչում է շահույթում կամ վնասում:

Վերաապահովագրության գծով ակտիվները և պարտավորությունները ապահովվում են, երբ պայմանագրային իրավունքները կատարվում են, կամ, երբ պայմանագիրը փոխանցվում է այլ կողմի:

### **Եկամուտների և ծախսերի ճանաչում**

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

### **Ներդրումային եկամուտ**

Ներդրումային եկամուտը լիարժեք է տոկոսային եկամուտից, պարտքային արժեթղթերի և այլ վարկերի և դեբիտորական պարտքերի ամորտիզացված արժեքի փոփոխություններից:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրմանը զուգահեռ և հաշվարկվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### **Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր**

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

### **Աշխատակիցներին հատուցումներ**

Աշխատակիցներին հատուցումները ներառում են մասնավորապես աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները, ինչպիսիք են աշխատավարձը, սոցիալական ապահովության մասնավորումը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները, տարեկան արձակուրդները, ինչպես նաև ազատման նպաստները:

Աշխատակիցների հատուցումները ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, երբ աշխատակիցները մատուցում են իրենց ծառայությունը Ընկերությանը:

Ընկերությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների բացակայությունները տարբեր պատճառներով, ինչպիսիք են արձակուրդը, անաշխատունակությունը, հիվանդությունը, ծննդաբերությունը:

Ընկերությունը չափում է կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով սկնկավոր ծախսումները որպես լրացուցիչ գումար, որը Ընկերությունը սկսելով է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

### **Փոխարժեքային տարբերությունների ճանաչում**

Արտարժույթով գործարքները տեղի ունենալու պահին գրանցվում են ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները ներկայացվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է սովյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Ստորև ներկայացվում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Կազմակերպության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

	<i>31 Դեկտեմբեր 2015թ.</i>	<i>31 Դեկտեմբեր 2014թ.</i>
ՀՀ դրամ/ 1ԱՄՆ դոլար	483.75	474.97
ՀՀ դրամ/ 1 Եվրո	528.69	577.47

### **Հարկում**

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված հարկերը հաշվի են առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկը առաջացել է գույքի կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններում ակտիվների կամ պարտավորությունների նախնական ճանաչման ժամանակ և ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Կազմակերպության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են «այլ ծախսեր» հոդվածում: Շահութահարկը ճանաչվում է շահույթ/վնասում:

### **Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Կազմակերպությանը ետ վերադարձման:

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են

<i>Շենք-շինություններ</i>	<i>20 տարի</i>
<i>Տնտեսական գույք</i>	<i>5 տարի</i>
<i>Հաշվողական և համակարգչային սարքավորումներ</i>	<i>1 տարի</i>
<i>Տրանսպորտային միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>Այլ հիմնական միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>Սինչև հիսուն հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ</i>	<i>1 տարի</i>

Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Այն ծախսումները, որոնք բարձրացնում են հիմնական միջոցի միավորի շահագործման արդյունավետությունը սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշների համեմատ, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Նշված ծախսումներն ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, եթե դրանք չեն գերազանցում տվյալ տարվա (հիմնական միջոցի տվյալ միավորի արժեքին նշված ծախսումները ավելացնելու տարվա) հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի մնացորդային արժեքը, հակառակ դեպքում ամորտիզացվում են օգտակար ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

Հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են: Վերագնահատման արդյունքները արտացոլվում են ՀՀՍՍ 16-ով սահմանված կարգով:

### **Ոչ նյութական ակտիվներ**

Ընկերության կողմից ձեռք բերվող ոչ նյութական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն անորոշագրվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյոք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

### **Ֆինանսական գործիքներ**

Ընկերության ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրության գծով դեբիտորական պարտքերը, այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ներդրումները, ապահովագրության գծով և այլ կրեդիտորական պարտքերը, այլ պարտավորությունները:

### ***Ֆինանսական ակտիվների ճանաչում, չափում***

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապահովվում են այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այլ անձանց:

Ֆինանսական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով, բացառությամբ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների, որոնք ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գնանշումների հիման վրա:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերությունը պետք է գնահատի, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկված է: Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ամորտիզացված արժեքով հաշվառվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն՝ գեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով գեղչված ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Հաշվեկշռային ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման աստիճանը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթ/վնասում:

### ***Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ***

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացվող արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### ***Վարկեր և դեբիտորական պարտքեր***

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ են, որոնք առաջանում են, երբ Կազմակերպությունը անմիջապես միջոցներ է տրամադրում պարտապանին՝ առանց դեբիտորական պարտքը վաճառելու մտադրության:

Հետագայում վարկի և դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքը որոշվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք չունեն մարման հաստատուն ժամկետներ, հաշվառվում են ակնկալվող մարման ժամկետի վրա հիմնված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տրված վարկերի և դեբիտորական պարտքերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկման կորուստների պահուստներով:

### ***Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ***

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ռեզիդենտ բանկերում ներդրված դրամական միջոցները:

### **Այլ ֆինանսական պարտավորություններ**

Այլ ֆինանսական պարտավորությունները Ընկերության կողմից վճարման ենթակա գումարներն են, որոնք առաջանում են կրեդիտորներից ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու հետևանքով:

Պարտավորությունը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Կրեդիտորական պարտքը սկզբնապես ճանաչվում է սկզբնական /հաշվում նշված/ արժեքով:

Կազմակերպությունը պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հեռացնի ֆինանսական պարտավորությունը այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

### **Վարկեր և Փոխառություններ**

Վարկերը և փոխառությունները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված գուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապահանջվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

### **Վարձակալություն**

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

### **Պահուստներ**

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է, այն պետք է ճանաչվի, երբ՝ Ընկերությունն ունի ներկա պարտականություն որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

### **Շահաբաժիններ**

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և հաշվեկշռային ամսաթվի դրությամբ նվազեցվում են կապիտալից միայն այն դեպքում, եթե դրանք հայտարարվել են մինչև հաշվեկշռային ամսաթիվը կամ այդ ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, երբ դրանք առաջարկվում են մինչև հաշվեկշռային ամսաթիվը, կամ առաջարկվում կամ հայտարարվում են հաշվեկշռային ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատումը հրապարակման համար:

### **Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և գուտ գումարը արտացոլվում է հաշվեկշռում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է գուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

### **Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում**

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե փոփոխություն է կատարվել հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ. կամ հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին տեղեկատվության ներկայացմանը:

### **Ծանոթագրություն 4. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

ՖՀՍՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և

ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վատահեղի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տառաջանալ կատարված գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

### ***Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ***

Ապահովագրության պայմանագրերի համար գնահատումները պետք է կատարվեն ինչպես հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկայացված ակնկալվող պահանջների վերջնական արժեքի համար, այնպես էլ այն ակնկալվող պահանջների արժեքի համար, որոնք տեղի են ունեցել, սակայն դեռևս չեն ներկայացվել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ (ՏՉՊՊ): Պահանջների վերջնական արժեքը հստակորեն որոշելու համար կարող է զգալի ժամանակ պահանջվել և որոշ պայմանագրերի դեպքում, տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջները կազմում են հաշվեկշռի պարտավորությունների մեծ մասը:

Այս գնահատումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունը կայանում է նրանում, որ Ընկերության անցյալ պահանջները կարող են օգտագործվել պահանջների հետագա զարգացումը և, հետևաբար նաև, պահանջների վերջնական արժեքը կանխատեսելու համար: Որպես այդպիսին, այս մեթոդներն արտացոլում են վճարված և տեղի ունեցած վնասները, յուրաքանչյուր պահանջի գծով միջին ծախսերը, նախորդ տարիներում հետազոտված պահանջների քանակը և ակնկալվող վնասաբերության ցուցանիշները:

Պահանջների պատմական զարգացումը հիմնականում վերլուծվում է տվյալ տարվա համար, սակայն կարող է նաև վերլուծվել աշխարհագրական տարածքից ելնելով, ինչպես նաև ըստ նշանակալի ապահովագրական դասերի: Հիմնական դժվարությունը կայանում է նրանում, որ Հայաստանի ապահովագրական շուկան համեմատաբար նոր է և անկայուն, այդուամենայնիվ, գրեթե անհնար է կատարել ապագա գնահատումներ՝ հիմնվելով պատմական տվյալների վրա:

Ընկերությունը գնահատում է ներկայացված պահանջները «դեպք-առ-դեպք» մեթոդով, բացառությամբ ապահովագրության այն դասերի, որտեղ պահանջների՝ հաշվետու ամսվա և դրան նախորդող տասնմեկ ամիսների միջին ամսական քանակը հիսուն և ավելի է, և պահանջների հատուցումների չափերն այդ ամիսների ընթացքում էականորեն չեն տատանվել: Նման դասերի համար օգտագործվում է «միավոր պահանջի հատուցման միջին չափի» գնահատում: ՏՉՊՊ-ն գնահատվում է՝ օգտագործելով վիճակագրական մեթոդներ, որոնք հիմնվում են անցյալ տարիների պատմական տվյալների վրա:

### ***Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից պահուստներ***

Ընկերությունը գնահատում է խնդրահարույց դեբիտորական պարտքերը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբերվել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի դեբիտորական պարտքերի համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Ընկերությունը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի և արդյունաբերության ռիսկում և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

### ***Հարկային օրենսդրություն***

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների:

## **Ծանոթագրություն 5. Ապահովագրավճարներ**

(Հազար ՀՀ դրամ)



	Համախառն ապահովագրավճարներ		Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	
	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.
Գծբախտ պատահարներից ապահովագրություն	53,092	43,820	(74)	-
Առողջության ապահովագրություն	1,112,748	1,329,756	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	329,468	348,753	(77,994)	(84,450)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	142,628	168,434	(94,066)	(80,882)
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	230,330	210,475	(148,710)	(167,434)
Ավտո պատասխանատվություն	10,122	4,128	(1,187)	(773)
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	90,483	52,102	(15,146)	(20,947)
Երաշխիքի ապահովագրություն	8,884	6,692	(8,127)	(6,481)
Աջակցության ապահովագրություն	39,147	38,478	-	-
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր պահովագրություն	2,871,422	2,436,329	-	-
	<b>4,888,324</b>	<b>4,638,967</b>	<b>(345,304)</b>	<b>(360,967)</b>

**Ծանոթագրություն 6. Չվաստակաճ ապահովագրավճարի պահուստի փոփոխություն**

(Հազար ՀՀ դրամ)

	Փոփոխություն չվաստակաճ ապահովագրավճարների պահուստում		Փոփոխություն չվաստակաճ ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնում	
	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.
Գծբախտ պատահարներից ապահովագրություն	(5,948)	(130)	71	-
Առողջության ապահովագրություն	(106,406)	585,178	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	2,370	6,818	(1,457)	(8,037)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	3,941	(2,185)	2,204	177
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(20,781)	(3,861)	6,419	(8,732)
Ավտո պատասխանատվություն	(3,771)	(208)	168	(9)
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	(38,712)	(10,468)	(14,333)	12,342
Ֆինանսական վնասների ապահովագրություն	(1,824)	(106)	1,586	49
Աջակցության ապահովագրություն	306	(1,373)	-	-
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր պահովագրություն	(316,976)	(138,599)	-	-
	<b>(487,801)</b>	<b>435,066</b>	<b>(5,342)</b>	<b>(4,210)</b>

**Ծանոթագրություն 7. Եկամուտներ միջնորդավճարներից**

(Հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Գծբախտ պատահարներից ապահովագրություն	30	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	-	3,169
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	23,208	6,026
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	23,798	17,638
Ավտո պատասխանատվություն	149	226
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	4,009	4,303
Ֆինանսական վնասների ապահովագրություն	1,219	972
	<b>52,413</b>	<b>32,334</b>

**Ծանոթագրություն 8. Եկամուտներ ներդրումներից**

(Հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Ռեզիդենտ բանկերի ավանդներից, ռեպո համաձայնագրերից տոկոսային եկամուտ	306,408	282,884
ՀՀ ոչ պետական պարտատոմսերից տոկոսային եկամուտ	35	869
Տրամադրված փոխառություններից տոկոսային եկամուտ	24,660	22,987
Այլ ներդրումներից եկամուտ	280	455
	<b>331,383</b>	<b>307,195</b>

**Ծանոթագրություն 9. Այլ գործառնական եկամուտ**

(Հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Գաղարեցման հետևանքով ստացվելիք վերաապահովագրավճարներ	7,671	4,888
Այլ գործառնական եկամուտ	4,643	4,591
	<b>12,314</b>	<b>9,479</b>

**Ծանոթագրություն 10. Հատուցումներ**

(Հազար ՀՀ դրամ)

	Համախառն հատուցումներ		Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ	
	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(4,000)	-	-	-
Առողջության ապահովագրություն	(511,771)	(1,212,822)	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(164,686)	(167,531)	71,751	58,147
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(2,189)	(551,437)	154	530,846
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(132,642)	(3,590)	113,861	349
Ավտո պատասխանատվություն	(91)	-	-	-
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	-	(23,338)	-	15,279
Ֆինանսական վնասների ապահովագրություն	(32,780)	-	40,668	-
Աջակցության ապահովագրություն	(1,822)	(1,732)	-	-
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	(1,033,097)	(1,201,793)	-	-
	<b>(1,883,078)</b>	<b>(3,162,243)</b>	<b>226,434</b>	<b>604,621</b>

**Ծանոթագրություն 11. Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում**

(Հազար ՀՀ դրամ)

	Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում		Համախառն փոփոխություններ՝ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնում	
	2015թ.	2014թ.	2015թ.	2014թ.
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(9,606)	(25,346)	-	-
Առողջության ապահովագրություն	108,050	82,566	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(5,777)	6,625	(2,282)	(9,372)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	25,644	1,175	200	(23,617)
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	1,681	21,605	-	(756)
Ավտո պատասխանատվություն	(6)	-	-	-
Ընդհանուր պատասխանատվության	6,666	13,790	(2,218)	(15,279)

ապահովագրություն				
Ֆինանսական վնասների ապահովագրություն	34,235	(36,221)	(34,497)	34,496
Աջակցության ապահովագրություն	(2,110)	(4,443)	-	-
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր պահովագրություն	6,994	102,881	-	-
	<b>165,771</b>	<b>162,632</b>	<b>(38,797)</b>	<b>(14,528)</b>

**Ծանոթագրություն 12. Չեռքերման ծախսեր**

(Հազար ՀՀ դրամ)

	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Առաջնային միջնորդավճար	(800,456)	(986,328)
Երկրորդային միջնորդավճար	(3,466)	(2,535)
	<b>(803,922)</b>	<b>(988,863)</b>

**Ծանոթագրություն 13. Այլ գործառնական և վարչական ծախսեր**

(Հազար ՀՀ դրամ)

	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Գաղարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող ապահովագրավճարներ և պարզևավճարներ	(130,280)	(265,975)
Վնասների կարգավորման և այլ ծախսեր	(40,288)	(32,016)
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, արձակուրդային պահուստ	(427,789)	(460,446)
Գործուղման ծախսեր	(2,268)	(1,648)
Հիմնական միջոցների վարձակալության գծով ծախսեր	(136,212)	(126,217)
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	(3,218)	(2,680)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(49,700)	(16,700)
Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(12,699)	(16,520)
Սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(3,409)	(5,094)
Շենքի վերանորոգում	(821)	(356)
Կապ և հեռահաղորդակցություն	(23,732)	(23,583)
Տոկոսային ծախսեր	(26,690)	(37,504)
Գրասենյակային, տնտեսական,չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և այլ Ուսուցման ծախսեր	(94,254)	(91,189)
	(1,449)	(362)
	<b>(952,809)</b>	<b>(1,080,290)</b>

**Ծանոթագրություն 14. Այլ ծախսեր**

(Հազար ՀՀ դրամ)

	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Գովազդի գծով ծախսեր	(33,992)	(35,529)
Ներկայացուցչական ծախսեր	(6,843)	(5,681)
Անդամավճարներ, բարեգործություն	(60,079)	(77,063)
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվներ մաշվածություն	(76,516)	(74,277)
Տուգանքներ և այլ ծախսեր	(15,219)	(2,844)
Ֆինանսական ակտիվների իրացումից ծախս	(2,554)	(1,197)
Հիմնական միջոցների իրացումից զուտ ծախս, արժեզրկումից կարուստ	-	(500)
	<b>(195,203)</b>	<b>(197,091)</b>

**Ծանոթագրություն 15. Շահութահարկի գծով ծախս**

(Հազար ՀՀ դրամ)

	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Ընթացիկ հարկի գծով ծախս	(160,423)	(74,639)
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	3,170	1,428
Հետաձգված հարկի գծով ծախս	(3,243)	(710)
	<b>(160,496)</b>	<b>(73,921)</b>

Ծանոթագրություն 16. Հիմնական միջոցներ

(Հազար ՀՀ դրամ)

	Շենքեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
<b><u>Մկրթական արժեք</u></b>					
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2013թ.</b>	<b>322,262</b>	<b>105,994</b>	<b>56,825</b>	<b>136,175</b>	<b>621,256</b>
Ավելացում	-	3,849	-	5230	9,079
Օտարում	-	-	(1,648)	-	(1,648)
Վերագնահատում	75,910	-	74,065	-	149,975
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2014թ.</b>	<b>398,172</b>	<b>109,843</b>	<b>129,242</b>	<b>141,405</b>	<b>778,662</b>
Ավելացում	-	12,576	20,601	2,725	35,902
Օտարում	-	(495)	(5,300)	(1,080)	(6,875)
Վերագնահատում	-	-	-	-	-
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2015թ.</b>	<b>398,172</b>	<b>121,924</b>	<b>144,543</b>	<b>143,050</b>	<b>807,689</b>
<b><u>Կուտակված մաշվածություն</u></b>					
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2013թ.</b>	<b>38,654</b>	<b>78,448</b>	<b>29,518</b>	<b>72,627</b>	<b>219,247</b>
Ավելացում	16,429	18,346	10,933	24,875	70,583
Օտարում	-	-	(1,648)	-	(1,648)
Վերագնահատում	15,748	-	60,139	-	75,887
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2014թ.</b>	<b>70,831</b>	<b>96,794</b>	<b>98,942</b>	<b>97,502</b>	<b>364,069</b>
Ավելացում	19,917	9,358	19,162	24,335	72,772
Օտարում	-	(494)	(4,265)	(1,081)	(5,840)
Վերագնահատում	-	-	-	-	-
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2015թ.</b>	<b>90,748</b>	<b>105,658</b>	<b>113,839</b>	<b>120,756</b>	<b>431,001</b>
<b><u>Չուտ հաշվեկշռային արժեք</u></b>					
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2015թ.</b>	<b>307,424</b>	<b>16,267</b>	<b>30,704</b>	<b>22,293</b>	<b>376,688</b>
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2014թ.</b>	<b>327,341</b>	<b>13,049</b>	<b>30,300</b>	<b>43,903</b>	<b>414,593</b>

Ծանոթագրություն 17. Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

(Հազար ՀՀ դրամ)

	2015թ.	2014թ.
Մնացորդը առ 01 հունվար	234,000	232,700
Ավելացում	-	-
Օտարում	-	(65,700)
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր</b>	<b>234,000</b>	<b>234,000</b>

Ծանոթագրություն 18. Ոչ նյութական ակտիվներ

(Հազար ՀՀ դրամ)

	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<b><u>Մկրթական արժեք</u></b>			
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2013թ.</b>	<b>24,359</b>	<b>13,962</b>	<b>38,321</b>
Ավելացում	522	180	702
Օտարում	(529)	(180)	(709)
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2014թ.</b>	<b>24,352</b>	<b>13,962</b>	<b>38,314</b>
Ավելացում	681	-	681
Օտարում	(522)	(5,682)	(6,204)
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2015թ.</b>	<b>24,511</b>	<b>8,280</b>	<b>32,791</b>

**Կուտակված մաշվածություն**

**Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2013թ.**

Ավելացում

Օտարում

**Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2014թ.**

Ավելացում

Օտարում

**Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2015թ.**

<b>10,898</b>	<b>12,338</b>	<b>23,236</b>
2,929	765	3,694
(529)	(180)	(709)
<b>13,298</b>	<b>12,923</b>	<b>26,221</b>
2,990	752	3,742
(522)	(5,682)	(6,204)
<b>15,766</b>	<b>7,993</b>	<b>23,759</b>

**Ձուտ հաշվեկշռային արժեք**

**Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2015թ.**

**Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2014թ.**

<b>8,745</b>	<b>287</b>	<b>9,032</b>
11,054	1,039	12,093

**Ծանոթագրություն 19. Պահանջներ բանկերի նկատմամբ**

	<i>(Հազար ՀՀ դրամ)</i>	
	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդներ	2,642,832	1,491,141
Ավանդների գծով հաշվեկշռված տոկոսների մնացորդ	87,482	71,310
Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր	-	723,033
Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի տոկոս	-	1,423
Բանկի արժեկտրոնային պարտատոմս	968	-
Հնարավոր կորուստների պահուստ	(27,303)	(22,869)
	<b>2,703,979</b>	<b>2,264,038</b>

**Ծանոթագրություն 20. Տրամադրված փոխառություններ**

	<i>(Հազար ՀՀ դրամ)</i>	
	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառություններ	296,500	318,801
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառություններ գծով ստացվելիք տոկոսներ	22,929	24,027
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ	171,000	10,605
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ գծով ստացվելիք տոկոսներ	181	314
Հնարավոր կորուստների պահուստ	(39,569)	(11,895)
	<b>451,041</b>	<b>341,852</b>

**Ծանոթագրություն 21. Դեբիտորական պարտքեր**

	<i>(Հազար ՀՀ դրամ)</i>	
	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Մուբրոգացիայի հետևանքով առաջացած պարտքեր	42,558	120,291
Այլ դեբիտորական պարտքեր	960	1,738
Հնարավոր կորուստների պահուստ	(10,246)	(43,794)
	<b>33,272</b>	<b>78,235</b>

**Ծանոթագրություն 22. Տրված կանխավճարներ**

	<i>(Հազար ՀՀ դրամ)</i>	
	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Հատուցումների գծով	17,007	10,157
Գործակալներին տրված կանխավճարներ	42,302	38,230
Կանխավճարներ ածխատավարձի գծով	1,909	4,276
Այլ կանխավճարներ	32,725	31,533
